

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԻՍՊԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
ՀԵՆՐԻԿ ԱՆՏՈՆԻ ԷՊՈՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
ՆԱՏԱԼՅԱ ՄԻՔԱՅԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
ՌՈՒԶԱՆ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ ԵՊՀ-ում գործող Գրականագիտության 066 մասնագիտական խորհրդում, (հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 420 լսարան):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. օգոստոսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ



Ա. Վ. Եգանյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքում ուսումնասիրվում է հայոց ցեղասպանության թեման իսպանական գրականության մեջ:

ժամանակակից գրականությանն ու արվեստին հետաքրքրում են 21-րդ դարի մարդու դեմ ծառայած հարցերն ու համամարդկային մեծ մտահոգությունները, որոնք նախանշեցին գեղարվեստական մտածողության վերափոխումն ու գեղարվեստական իդեալի որոնումները: Այս հանգամանքով պետք է բացատրել համաշխարհային գրականության առավել արդիական թեմաների շրջանակում ցեղասպանության խնդրի արծարծումն ու քննությունը:

Քաղաքացիական պատերազմից հետո Իսպանիայում սկսվեց վերլուծությունների ու վերագնահատության շրջանը, որի ընթացքում իսպանացի մտավորականը սեփական մտահոգությունների համապատկերում անդրադարձավ նաև համամարդկային հիմնախնդիրներին, որոնք դարձել էին նրա հետաքրքրության առարկան, իսկ ազգային տառապանքի զգացողությունը նրան ստիպեց հասնելու համամարդկային ցավի ու տառապանքի ընկալմանը: Սրա արդյունքում արդեն անցյալ դարի 80-ական թվականներից Իսպանիայում սկսեցին խոսել հայոց ցեղասպանության մասին, իսկ իսպանացի նշանավոր լրագրող Խոսե Անտոնիո Գուտիարանն առաջինն էր, որ գեղարվեստի լեզվով պատմեց այն:

Ատենախոսության երեք գլուխներում ուսումնասիրվել են հայոց ցեղասպանության թեման պատկերող վեպերը<sup>1</sup>, բանաստեղծություններն ու հրապարակախոսական հոդվածները, քննվել են դրանց գեղարվեստական-գեղագիտական չափանիշները: Փորձել ենք ուսումնասիրել իսպանական մամուլում ու գիտական գրականության մեջ հայոց ցեղասպանությանը վերաբերող բոլոր քիչ թե շատ նշանակալի անդրադարձները, ցեղասպանության խնդիրներին վերաբերող հետազոտությունները:

---

<sup>1</sup> Տե՛ս **Անգլադա Ա. Մ.**, Արամի հուշատետրը, Երևան, ԱՕԿՍ, 2008: **Guarch H. G.**, El árbol armenio, Barcelona, Ediciones del Bronce, 2002. **Guarch H. G.**, El testamento armenio, Córdoba, Editorial Almuzara, 2008. **Guarch H. G.**, La montaña blanca, Barcelona, 2009. **Gurriarán J. A.**, La bomba, Barcelona, Editorial Planeta, 1982. **Gurriarán J. A.**, Armenios. El genocidio olvidado, Madrid, Editorial Espasa Calpe, 2008. **Morte M. U.** El Cáucaso entre leyendas y Kaláshnikov, Barcelona, Ediciones Flor del viento, 2007. **Morte M. U.** Los hijos del Ararat, Barcelona, Ediciones Carena, 2008.

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է ոչ միայն ցեղասպանության թեմայի նկատմամբ դրսևորվող հետաքրքրությամբ և թեմայի շրջանակներում առաջադրվող հարցադրումների հրատապությամբ, այլև ժամանակակից գրականագիտության մեջ թեմայի ուսումնասիրվածության բացով: Իսպանացի գրողների՝ հայոց ցեղասպանությանը նվիրված ստեղծագործությունների ուսումնասիրությանը հայ քննադատական միտքը դեռևս չի անդրադարձել, ավելին՝ դրանք գրեթե չեն ենթարկվել գրականագիտական վերլուծության նաև Իսպանիայում: Մեր ատենախոսությունը նաև իսպանական գրականագիտության մեջ հայոց ցեղասպանության թեմայի ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն է:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեման է:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել տարբեր հեղինակների կողմից թեմայի պատկերման առանձնահատկությունները, նրանց արժևորումն ու տված գնահատականները 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած սարսափելի իրադարձություններին:

Ելնելով դրանից՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- ցույց տալ թեմայի մշակվածությունն ու զարգացումը իսպանական գրականության մեջ, ի հայտ բերել ցեղասպանության խնդրի քննման հայեցակերպը,
- ուսումնասիրել քննվող գործերի ստեղծման պատմամշակութային հիմքերն ու նախապայմանները,
- կատարել ստեղծագործությունների գաղափարական և կառուցվածքային յուրահատկությունների վերլուծություն՝ յուրաքանչյուր գրողի մոտ բացահայտելով պատմական նյութի և գեղարվեստական հորինվածքի միահյուսման եղանակներն ու սկզբունքները,
- ներկայացնել խնդրո առարկա արձակ երկերի ժանրային ինքնօրինակությունները:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Իսպանացի գրողների՝ հայոց ցեղասպանությանը նվիրված ստեղծագործություններից միայն Մարիա Անխելա Անգլադայի՝ գեղարվեստական արձակի վերլուծության համատեքստում է որոշակի անդրադարձ կատարվել «Արամի հուշատետրը» վեպին<sup>2</sup>: Հարկ է նշել, որ այս ստեղծագործությունների կեսը դեռ հայերեն թարգմանված չէ (հայերեն թարգմանվել են Գ. Հ. Գուարչի եռագրությունը, Խ. Ա. Գուդարանի «Ռումբը» և Մ. Ա. Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպերը<sup>3</sup>, և միայն Գուարչի վեպերի հայերեն թարգմանությունից հետո նկատվեց թեմայի նկատմամբ որոշակի հետաքրքրություն: Դրա արդյունքում հողվածով հանդես եկավ գրականագետ Ա. Հակոբյանը «Ուշագրավ վեպ հայոց ցեղասպանության մասին (Գոնսալո Գուարչի «Հայկական տոհմաճառը»)» վերնագրով (Գիտական աշխատություններ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 68-72), իսկ լեզվաբան Ա. Գալստյանը «Գոնսալո Էռնանդես Գուարչի «Հայոց կտակ» վեպ-հուշագրության լեզվաոճական մի քանի հարցեր» հողվածում քննում է իսպանացի հեղինակի վեպի լեզվական իրողությունները (Միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2012, էջ 5-11):

Մեր ատենախոսությունն իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն է, որն ըստ էության ապահովում է խնդրո առարկայի գիտական նորոպը. Դրա արդյունքում առաջին անգամ դասակարգվում-վերլուծվում են հայոց ցեղասպանության թեման պատկերող ութ վեպեր, բանաստեղծություններ ու հրապարակագրություններ, քննվում են դրանց գեղարվեստագեղագիտական չափանիշները:

---

<sup>2</sup> Տե՛ս **Antoni P.**, Or literari. Consideracions entorn l'obra angliana. AUSA, vol. 24, núm. 166, 2010. **Foguet F.**, M. Àngels Anglada. Passió per la memòria, Barcelona: Pòrtic, 2003. **Mercè Miró M.**, «Aproximació a l'obra de Maria Àngels Anglada. Notes per a una lectura», dins AUSA, volum XIX, núm. 145, 2000. **Pina F.**, Guia de lectura de Quadern d'Aram, <https://lallenguacatalana.files.wordpress.com>. **Pujol E.**, Maria Àngels Anglada i la història, AUSA, vol. 24, núm. 166, 2010.

<sup>3</sup> **Խ. Ա. Գուդարանի «Ռումբը»** հայերեն թարգմանել է **Շուշան Սիրոյանը**: Գուարչի եռագրության թարգմանիչը **Մերի Սուքիասյանն** է: **Մ. Ա. Անգլադայի «Արամի հուշատետրը»** վեպի թարգմանիչը **Գրիգոր Զանիկյանն** է: Մնացած ստեղծագործություններից բերված մեջբերումների թարգմանությունները մերն են – Ս. Կ.:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են համադրման, զուգադրման և համեմատական վերլուծության մոտեցումները: Մի կողմից համեմատականներ են անցկացվում իսպանացի հեղինակների և հայոց ցեղասպանությունը ներկայացրած այլազգի հեղինակների մոտեցումների միջև, մյուս կողմից համակարգային-ամբողջական վերլուծության սկզբունքով ուսումնասիրվում են խնդրո առարկա հեղինակների առանձին վեպերը: Բացի այդ՝ հետազոտման ընթացքում հաշվի են առնվել Մորիս Հալբվակսի, Ռայնհարդ Կոզելեկի, Յան Ամանի, Ալեյդա Ամանի հանրային հիշողությանը նվիրված հետազոտությունները, ցեղասպանագետ Ժոան Ֆոխիոլե Ռեիքսաչի ուսումնասիրությունները «գողացված կյանքերի», զոհ-դահիճ փոխհարաբերության, «մշակութային հիշողության» մասին, որոնք օգնում են վիպական նյութը նոր, արդի մոտեցումների համատեքստում դիտարկելու համար: Նյութը մատուցվում է բնագրային վերլուծությունների հիման վրա, և բոլոր այն բնագրերից, որոնք դեռ հայերեն թարգմանված չեն, մեջբերումներն արվում են մեր թարգմանությամբ:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ցեղասպանագիտական ձեռնարկ ստեղծելու, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի դասընթացների կազմակերպման, ինչպես նաև հանրապետության բուհերում արտասահմանյան գրականության պատմության դասախոսությունների, հատուկ դասընթացների, «Հայոց ցեղասպանության արտացոլումը գրականության մեջ» թեմայի ուսումնասիրման ժամանակ:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնում: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի ամսագրերում և պարբերականներում, ինչպես նաև ներկայացվել են գիտաժողովներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, ընդհանուր եզրակացություններից և օգտագործված գրականության ու աղբյուրների ցանկից:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված են թեմայի ուսումնասիրվածությունը, ատենախոսության մեթոդաբանությունը, ձևակերպված են գիտական նորույթը, հիմնական նպատակն ու խնդիրները: Ներկայացված է ատենախոսության կառուցվածքը՝ յուրաքանչյուր գլխի բովանդակության համառոտ ընդգրկմամբ:

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

#### Խ. Ա. ԳՈՒԴԻԱՐԱՆԻ ՎԵՊԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 «ՌՈՒՄԲԸ» ՎԵՊԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է Խ. Ա. Գուտիարանի «Ռումբը» և «Հայեր. մոռացված ցեղասպանություն» վեպերի քննությանը: Այդ ստեղծագործություններին բնորոշ է ինքնակենսագրական արձակի տարրերի կիրառումը, ինչը միաժամանակ հնարավոր է դարձնում փիլիսոփայորեն ընկալել մարդու անձնական դրամայի պատկերումը:

Հայերին ու մասնավորապես հայոց ցեղասպանությանը Գուտիարանն անդրադարձել է դեռևս 1982-ին՝ լույս ընծայելով «Ռումբը» վեպը՝ առաջին անգամ իսպանական գրականության մեջ ներկայացնելով հայոց ցեղասպանության թեման:

Գիրքն ինքնակենսագրական հենքով օրագրություն է, որով գրողը պատմում է 1980թ. դետեմբերի 29-ին Մադրիդի «Մեծ ճանապարհ» ("Gran Via") կոչվող հրապարակում ԱՍԱԼԱ-ի պայթեցրած երկու ռումբերի հետևանքով իր՝ ծանր վիրավորվելու պատմությունը: Հայկական թեմայով Գուտիարանի գրած երկու վեպերը նպատակահարմար է վերլուծել կենսագրական փաստերի հիման վրա, ասել է թե՛ գրական երկի ստեղծման գործում կարևորել գրողի

կենսափորձի, անհատական ընկալումների, անհատական իմացության դերն ու նշանակությունը:

Գուռիարանը վեպը կառուցում է անցյալ դարի կեսերից իսպանական արձակուրդ կիրառված «օբյեկտիվ վեպի» սկզբունքներով, ինչը նշանակում է, որ «գրականությունը վերականգնել է առարկայի արժեքը և սկսել է հատուկ ուշադրություն դարձնել մարդու ներքին ընթացքին»<sup>4</sup>, իսկ վերջինս տեխնիկապես կիրառվում է գիտակցության հոսքի և ներքին մենախոսության միջոցով:

Վեպի դիպաշարը միահյուսվում է հերոսի ներքին մենախոսությամբ ու սեփական անձի մասին հերոսի մտորումներով, ինչի շնորհիվ մենախոսությունն ու վեպի ներքին կառուցվածքը չեն սահմանափակվում օրագրի ժանրային շրջանակներով:

Նկատենք, որ կենսափորձը միաժամանակ մարդու ինքնաճանաչման ելակետն է, իսկ գեղարվեստական հյուսվածքը՝ նվազագույնի հասած դիպաշարով ու հոգեբանական խորացումներով (ներհայեցողությամբ), միտված է բացահայտելու հերոսի ինքնափնտրությունը, որի ընթացքում նկատվում են հեղինակի նույնացումը օրագրողի կերպարին, ավելին՝ իրականության ու հորինվածքի սահմանների ջնջումը հեղինակի ու կերպարի միջև:

«Ռումբը» վեպի թեման *գոհ-դահիճ* փոխհարաբերությունն է, տառապանքի ու դժվարագույն իրադրության մեջ անգամ մարդ տեսակը չկորցնելու պատմությունը: Այս հիմնական թեմայից զատ՝ գրողը հասնում է նոր թեմաների ու երկրորդական մոտիվների՝ ցեղասպանությունը վերապրածների ժառանգների հոգեբանական խորացումների ու հոգեբանական վերքերի բացահայտմանը, մարդու անձնական դրամայի պատկերմանը: «Ռումբը» գրքով հեղինակը ոչ միայն անդրադառնում է հայոց ցեղասպանությանը, առհասարակ մարդու, այլ նաև, գուցե ոչ անմիջականորեն, հատկապես 80-ականներից իսպանիայում թափ առած ահաբեկչության թեմաներին: Հայոց ողբերգությունն այդ համապատկերում ներկայացվում է որպես 20-րդ դարի չարիքներից մեկը, մարդկության դեմ իրականացվող հանցանք, ցեղասպանության դրսևորման ձև:

## 1.2 «ՀԱՅԵՐ. ՄՈՌԱՑՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊԸ ՅՈՒՐԱՏԵՍԱԿ ՎԵՊ-ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայեր. մոռացված ցեղասպանություն» վեպը Գուռիարանի երկրորդ անդրադարձն է հայերին ու հայոց ցեղասպանությանը: Քսանյոթ տարի անց Հայաս-

<sup>4</sup> **Castellet J. M.**, De la objetividad al objeto, Papeles de Son Armadans, 1957, junio, pág. 312.



տան կատարած իր այցից հետո գրողը վերստին անդրադառնում է հայկական թեմային: Այս վեպը չունի ժանրային հստակ սահմաններ. այն մոտ է ճանապարհորդական տպավորություններով, ինքնակենսագրական հենքով, պատմագիտական, մշակութային խորհրդածություններով հագեցած ուղեգրության, որտեղ բացահայտվում են Հայաստանն ու հայ մարդը՝ իր ապրումներով ու աշխարհընկալմամբ: Այստեղից էլ վեպի կոմպոզիցիոն առանձնահատկությունը. վեպի գլուխները կամ մասերը միշտ չէ, որ իրար հետ կապված են, որովհետև դասական առումով միասնական, կապակցված դիպաշարը բացակայում է: Առանձին գլուխներն ու հատվածները միավորված են հեղինակային միջանկյալ խոհերով ու մեկնություններով: Ճանապարհորդությունը Հայաստանով, երկրին ու նրա ժողովրդին ճանաչելը վերածվում են գրական փորձի: Դա ասես մի յուրօրինակ ճանփորդություն է պատմության միջով՝ Հայաստանի անցյալից դեպի ներկան: Սա Անտոնիո Գուտիարանի վեպի կառույցի էական տարրերից է, որն ակնհայտ է դարձնում հեղինակի դիրքորոշումը. ազգի մտախառնվածքը, նրա աշխարհընկալումն ու ազգային դիմանկարն ավելի ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է լավ իմանալ նրա անցյալը, սեփական աչքերով տեսնել նրա ներկան: Միայն այս դեպքում կարող ես խորը ճանաչողությամբ պատմել նաև հայրենիքում ու հայրենիքից դուրս ապրող հայ մարդու, նրա հաղթահարած դժվարությունների, իսկ ցեղասպանությունը վերապրածների դեպքում՝ անլուր տառապանքների մասին:

Նկատենք, որ գրքում, որպես բացառիկ պատկեր-խորհրդանիշ, ներկա է Արարատ լեռը՝ որպես հայոց վերածնության ու հավերժ գոյության խորհրդանիշ: «Հայեր. մոռացված ցեղասպանություն» վեպով Գուտիարանն ինքն է փորձում մեկ անգամ ևս խոսել ու մոռացումի թմբիրից հանել մարդկանց (այստեղից էլ վերնագրի ընտրությունը), «ձգտում կոտրել մոռացության ու լռության պատը», հասնել պատմական ճշմարտության ճանաչմանը»<sup>5</sup>, ինչը ևս մեկ անգամ թույլ է տալիս փաստելու գրողի ընդգծված դիրքորոշումը: Այս գրքում հեղինակի ուշադրության կենտրոնում են կանանց կերպարները, և Գուտիարանն առանձին գլուխ է նվիրել նրանց, ովքեր, գրողի բնորոշմամբ, «առաջին գծում ուժով վերցրել էին նավի դեկը մինչև մահ կամ ազատություն, երբ իրենց հայրերը, ամուսինները և եղբայրներն արդեն անհետ կորել էին», ովքեր «քայլել էին սովի, ծարավի, վախի ու մահվան ճանապարհով»<sup>6</sup>:

Այսպիսով՝ «Հայեր. մոռացված ցեղասպանություն» վեպ-ուղեգրության մեջ ցեղասպանության հետևանքով աշխարհի տարբեր երկրներում հանգրվանած

---

<sup>5</sup> **Guirriarán J. A.**, Armenios. El genocidio olvidado, Madrid, pág. 28:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 234:

հայ ժողովրդի բեկորներին վիճակված կյանքի և ճակատագրի մասին ունեցած մտորումներից գրողն ստեղծում է հայոց արմատների ու էության, ժողովրդի պատմության, արդիականության և հեռանկարի դիպուկ ու բարդ համայնապատկերը: Չնայած ստեղծագործության ընդհանուր կուռ դիպաշարի բացակայությանը և դրվագայնությանը՝ գրողը ձգտում է ստեղծել մեկ միասնական ծավալուն կտավ, որն արտացոլում է հայ ժողովրդի ազգային ոգին ու պատմությունը: Գուտիարանի ընտրած կերպարները պատմական անձինք են, որ, լինելով տիպական կերպարներ, նաև խիստ անհատական են ու բացահայտում են ազգային գծեր:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**  
**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՊՊԱՎՈՐՈՒՄԸ**  
**ԳՈՆՍԱԼՈ ԳՈՒԱՐՉԻ ՎԵՊԵՐՈՒՄ**

**2.1 ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՀՄԱԾԱՌԸ»**  
**ՎԵՊՈՒՄ**

Իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի նկատմամբ հետաքրքրության ձևավորման գործում իր մեծ ներդրումն ունեցավ բարսելոնացի գրող և ճարտարապետ Գոնսալո Էռնանդես Գուարչը (1945): Նա հայոց ցեղասպանության խնդրին նվիրված իր ստեղծագործության մեջ փորձում է գտնել չարիքի պատմական, էթնո-կրոնական արմատները, խորանում հայ ազգի պատմամշակույթի մեջ: Կատալոնացի գրողը, նորովի բացահայտելով իսպանացի ընթերցողի համար հայի ինքնությունը, նրա պատմական հարուստ անցյալի անձանոթ էջերը, ընթերցողին տեղափոխում է այդ «չբացահայտված տարածքը» (terra incognita):

Հայկական եռագրության առաջին գրքում գրողը մի հայ գերդաստանի ողբերգական պատմությամբ պատկերում է ցեղասպանության սարսափներն ու ցավը, ավելին՝ երկրի պատմությունը բեկվում է մի քանի ընտանիքների ճակատագրում: «Հայկական տոհմաձառը» վեպը կառուցված է հետաքրքիր ու նորագույն գրականության մեջ լայն տարածում գտած խաղային եղանակով, ինչպես նաև հանելուկայինի, առեղծվածայինի տարրի կիրառումով, որը շատ բնորոշ է պոստմոդեռնիստական գրականությանը: Խաղային տարրն էլ՝ արտաքին, ձևային առումով, կապված է ստեղծագործության շարադրանքի դրվագայնության հետ:

Միաժամանակ նշենք, որ տվյալ վեպի համար բնութագրական է գեղարվեստական ամենատարբեր հնարքների թափանցումը վիպական կառույց: Այս

անգամ պաստիշի, միակցման տարրեր են դառնում գեղարվեստական պատումն ու վավերաթղթերի զուգակցումը, հաջորդումը կամ վավերագրական ներդիրի (փաստաթուղթ, հղում) առկայությունը գեղարվեստական տեքստում: Երկը, ի տարբերություն պոստմոդերնիստական ավանդական դարձած վեպերի մեծ մասի, ունի սյուժետային ճկուն կառուցվածք. հերոսների ճակատագրերը հիշեցնում են առանձին նովելանման պատմություններ, որոնց համադրումն ու միավորումը հնարավոր է դարձնում պատումի կառուցվածքի ամբողջականության վերականգնումը: Սյուժեն միատեղվում է մերթ հեղինակային պատմությամբ, մերթ վավերաթղթով, մերթ հերոսներից մեկի օրագրով ու հիշողություններով, ինչն էլ վեպի կառուցվածքային հնարքներից է:

Անհրաժեշտ է նկատել, որ բռնության ենթարկված կանանց ու բռնության հետևանքով ծնված երեխաների թեմային անդրադարձը, որը հիմնականում շրջանցվել է հայ գրականության մեջ, իսպանացի գրողի կողմից համարձակ քայլ է, իսկ հոգեբանական վարքագծի առումով կերպարները հաջողված են:

Գուարչը հետևողականորեն շարունակում է քննել հոգեբանական բնույթի հարցեր, որոնցում առանձնանում են կարևոր ու հետաքրքրական երկու դրսևորումներ՝ բռնակալի հոգեբանությունը և արյան ներքին կանչի՝ ազգային արմատներին վերադառնալու երևույթը, որը կերպարի կողմից ճշմարտության որոնման ու բացահայտման, պատմական խորը հիշողության վկայություններ են:

## 2.2 ԱՐԵՎՄՈՒՏՔ-ԱՐԵՎԵԼՔ ՀԱԿԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅՑՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԽՆԴԻՐԸ «ՀԱՅՈՑ ԿՏԱԿԸ» ՎԵՊՈՒՍ

«Հայոց կտակը» եռագրության երկրորդ գիրքն է՝ պատմավեպ-հուշագրություն, որն ընդգրկում է երեսունհինգ տարվա պատմություն՝ 1885-1920-ականները: Ժանրային առումով «Հայոց կտակը» մոտ է պատմակենսագրական վեպին այն հիմնավորումով, որ գրողի կողմից մտածված հերոսն իր կենսագրությամբ երևան է հանում պատմական դեպքերի ընթացքը, արտացոլում ժամանակաշրջանի ոգին: Սակայն, ըստ արտաքին ձևի ու կոմպոզիցիայի, այն վեպ-ժամանակագրություն է, որտեղ առաջին պլան է մղված պատմական իրադարձությունների ժամանակագրական շղթան:

Ժամանակատարածային ընդհանուր խորապատկերի վրա հեղինակը փորձում է ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Օսմանյան կայսրության մթնոլորտը՝ պատկերելով տարբեր խավերի ներկայացուցիչների, այդ թվում՝ նաև քաղաքական գործիչների: Սուլթանից մինչև հասարակ զինվորը, թվում է, վարակված են ազգայնամոլությամբ, այլազգիների հանդեպ մարդատ-

յացությանը. փաստորեն հերոսն իր համար բացահայտում է Օսմանյան կայսրության ամբողջ արատավորությունը: Հասարակական միջավայրի պատկերումն ըստ էության դառնում է վեպի գաղափարական բովանդակության ամենաէական հատկանիշներից մեկը՝ արժանահավատ ու համոզիչ կերպով ջրի երես բերել թուրքական հասարակական շրջոնքը: Վեպում Գուարչը ոչ միայն նորից անդրադառնում է սուլթան Համիդի կերպարին՝ հետևողականորեն ստեղծելով բռնակալի կերպարը՝ իբրև չարի խտացված մարմնավորում, այլև հզոր, բայց անմարդկային տիրակալի դիվային կերպարը ներկայացրել է սարկազմով և խոր հեզնանքով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ «Հայոց կտակը» պարունակում է դասական վեպի կառուցվածքային տարրերը՝ պատմական, ժամանակագրական, հոգեբանական ու արկածային ժանրերի համադրմամբ: Եթե առաջին վեպում ընտանեկան պատմության շրջանակում ներկայացված են ժամանակի քաղաքական իրավիճակը, պատմական սահմանափակ իրադարձություններ, ապա «Հայոց կտակ»-ում առաջին պլանում պատմական իրադարձություններն ու դեմքերն են, շարժառիթների և դրդապատճառների պարզաբանումը: Պատմական փաստերի ներմուծումը գեղարվեստական տեքստի ընդհանուր կտավի մեջ ապահովում է պատումի ճշմարտացիությունն ու հավաստիությունը, խոր ռեալիզմով է արտացոլում ժամանակաշրջանի թուրքական պետության մթնոլորտն ու իրակառնությունը:

### 2.3 «ՍՊԻՏԱԿ ԼԵՈՂ» ՎԵՊԸ. ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ՈՒՄԱՆԻԶՄԻ ՃԳՆԱԺԱՄԻ» ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

2008թ. հրատարակված «Սպիտակ լեռը» վեպը եզրափակում է գուարչյան եռագրությունը: Տարածաժամանակային ընդգրկման կտրվածքով վեպը մեծամասշտաբ գործ է (պատկերում է 1909-1940թթ. իրադարձությունները)՝ հարուստ ու հետաքրքրական իրողությունների դրվագումներով: Հետևաբար մենք գործ ունենք էպիկական ընդգրկմամբ վեպ-ժամանակագրության հետ. դիպաշարի կառուցման և պաթոսի տեսանկյունից վեպի բնորոշ գիծը էպիկականությունն է: Գուարչն ամենայն մանրամասնությամբ պարզաբանում է հայկական խյակների տարագրությունն ու հանգրվանելը Սիրիայում ու Լիբանանում և այդ երկրներում հայկական սփյուռքի ձևավորման պատմությունը: Թեմատիկ ընդգրկման այսպիսի տարողությամբ այն մոտ է սիրիացի արձակագիր Նեպիլ Սուլեյմանի «Արևելքի ծիրերը» քառահատոր վիպաշարին և Իբրահիմ ալ-Խալիլի «Ալ-հուտս» վեպին, որը ներկայացնում է 1915-1945թթ. ժամանակահատվածն ընդգրկող ի-

րադարձությունները՝ կապված սիրիական ու պաղեստինյան ժողովուրդների ազատագրական պայքարի և Մերձավոր Արևելքում հայկական խլյակների հանգրվանելու հետ: Վեպի հիմնական լեյտմոտիվները պատմական են, իսկ սյուժեի կառուցման հիմքը՝ պատմական-վավերական: Ինչպես Գուարչի նախորդ վեպերը, սա նույնպես ժանրային յուրօրինակ սինթեզ է՝ քաղաքական ու պատմակենսագրական, ժամանակագրական և փաստագրական վեպերի: Եթե նրա առաջին երկու գրքերում ցեղասպանությունն ավելի շատ ընկալվում է որպես միայն մեկ ժողովրդի կորուստ, ապա եռագրության վերջին գրքում այդ ամենը դիտարկվում է համընդհանուր ողբերգություն, որն իր հետքը թողել է համաշխարհային պատմության մեջ՝ ներկայացնելով մահմեդականության ու քրիստոնեության, Օսմանյան կայսրության ու վերջինիս ենթակա ժողովուրդների բախման, առհասարակ աշխարհաքաղաքական իրադարձությունների կոնտեքստում, որտեղ առաջին պլանում մարդն է՝ մենակ ցանկացած բռնության դեմ, անտեսված իր ցավի հետ:

Վեպի կառուցման առումով Գ. Գուարչի ստեղծագործությունն աչքի է ընկնում մոդեռնիստական (էքզիստենցիալ խնդիրներ, գիտակցության հոսք), ինչպես նաև պոստմոդեռնիստական տարրերի (պաստիշ, դրվագայնություն) կիրառմամբ, որոնք նպաստում են առավել խոր ու ազդեցիկ արտացոլելու հայերի ազգային ողբերգության ամբողջ ծավալը:

## **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

### **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱԿԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

#### **3.1 ՄՇԱԿՈՒՅԹԸ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ՄԱՐԻԱ ԱՆԽԵԼՍ ԱՆԳԼԱԴԱՅԻ «ԱՐԱՄԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ» ՎԵՊՈՒՍ**

«Արամի հուշատետրը» վեպ-օրագրություն է մի հայ ընտանիքի մասին, որը, հաղթահարելով տարագրության ու հարազատների կորստի ցավը, հանգրվանում է օտար երկրում՝ փորձելով պահպանել ազգային արմատները:

Վեպի գեղարվեստական կառույցի հիմնական դրսևորումներից է տարբեր պատմող կերպարների հանդես գալը. այն ամբողջանում է տարբեր հերոսների պատմած պատմություններով: Խոսքը վերաբերում է ոչ միայն հեղինակի, Վահեի, Մարիկի կողմից պատումը ներկայացնելուն, այլև իրադարձությունների ծավալային պատկերմանը: Այսինքն՝ ցեղասպանությունը ներկայացված չէ հեղինակային սուբյեկտիվ ընկալման միջոցով, ավելին՝ գրողն այդ մասին չի խոսում, այլ ներկայացնում է երկու տարբեր հերոսների՝ մոր և որդու դիտակե-

տից: Փաստորեն այստեղ գործ ունենք բազմադեմ պատմողի (multiple-narrator) տեխնիկայի հետ:

Վահեն կերպավորում է բանաստեղծին, որի նախատիպը Դ. Վարուժանն է, սակայն վեպում այն ամենից առաջ հայ ժողովրդի սպանված հատվածի հավաքական կերպարն ու խորհրդանիշն է: Թեև վեպն ստեղծելիս գրողն ուսումնասիրել և օգտագործել է կենսագրական որոշակի փաստեր, այդուհանդերձ Վարուժանի կերպարն ընդգծված ձևով հեռու է դիմանկարայնությունից: Ավելին՝ այն գործողություններին չմասնակցող կերպար է, որը, սակայն, օգտագործված է վեր հանելու ցեղասպանության ամբողջ ողբերգությունը: Հեղինակը, իբրև գրքի մտահղացում, գաղափար, օգտագործել է երկու կարևորագույն իրողություններ՝ պատմությունը և մշակույթը, որոնք բեկվում են 1915-ի ողբերգության մեջ: Իսպանացի գրականագետները նկատում են, որ վեպում օգտագործված որոշ կրկնվող տարրեր հանդես են գալիս որպես խորհրդանիշներ: Գրականագետ Մերսե Միրոն այդ տեսակետից մասնավորապես առանձնացնում է վարդը, ծովը և կարմիր հողը<sup>7</sup>:

Կիրառելով բռնության ու մշակույթի հակադրման հնարքը՝ գրողը զարգացնում է մշակութային ցեղասպանության գաղափարը: Հարկ է ընդգծել, որ մշակույթի և ցեղասպանության հակադրությունը վեպի իմաստաբանական գիծն է:

Հետաքրքիր է, որ գրականագետ Էնրիկ Պուխոլը «Մարիա Անխելա Անգլադան և պատմությունը» հոդվածում, որպես գրքի արժանիք, նշում է կատալոնացի ընթերցողի համար հայ ժողովրդի և նրա մշակույթի հայտնագործումը<sup>8</sup>:

### 3.2 ՄԱՐԴՈՒ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՄԱՐԿ ՄՈՐՏԵԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կատալոնացի գրող Մարկ Մորտեն «Կովկասը լեգենդների ու Կալաշնիկովի արանքում» (2007) վեպով անդրադառնում է 1915թ. պատմական իրադարձություններին և հայոց ցեղասպանությունը քննում է պատմական ակնարկի համատեքստում:

«Հայկական աղետ» գլխում Մորտեն անդրադարձել է հայ վրիժառուների՝ իր բնորոշմամբ՝ «հուսահատ ջանքերին», որոնք նպատակ ունեին աշխարհին հիշեցնել ու ստիպել դատապարտել թուրքական իշխանությունների կողմից

<sup>7</sup> Mercè Miró M., «Aproximació a l'obra de Maria Àngels Anglada. Notes per a una lectura», AUSA, volum XIX, núm. 145, 2000, pàg. 244.

<sup>8</sup> Տե՛ս Pujol E., Maira Àngels Anglada i la història, AUSA, vol. 24, núm. 166, 2010, pag. 630.

ծրագրված ցեղասպանությունը: Սակայն գրողը փորձում է նորովի ընկալել պատմական իրադարձությունները՝ ժամանակակից թուրքերին չհամարելով իրենց պապերի արածի պատասխանատուն:

Ավելին՝ գրողը փորձում է ընդհանրություններ գտնել 20-րդ դարում սարսափելի ողբերգություն ապրած երկու ժողովուրդների՝ հայերի և հրեաների միջև: Ըստ Մորտեի՝ «հայերը դիտարկվում են որպես Կովկասի հրեաներ, և նրանց պատմությունը զուգահեռաբար ընթանում է, ինչպես հրեա ժողովրդինը. հարստություն, սեփական պետականության բացակայություն, ցեղասպանություն, լարված ազգասիրություն, հայկական լոբբի ԱՄՆ-ում և հարևան երկրների կողքին Մեծ Հայաստան ունենալու փափագ»<sup>9</sup>:

2008թ. Մարկ Մորտեն լույս ընծայեց հայոց ցեղասպանության մասին գեղարվեստական վեպ՝ «Արարատի զավակները» վերնագրով, որը հեղինակային մտահղացման, կերպարաստեղծման ու գրական երկի գեղարվեստական ձևի առանձնահատկությունների առումով շահեկանորեն տարբերվում է մինչ այդ իսպանալեզու գրանության մեջ առկա հայոց ցեղասպանության խնդրին նվիրված ստեղծագործություններից:

Մորտեի գեղագիտական որոնումների կենտրոնում մարդու և հասարակության փոխհարաբերությունների, անհատի ներքին և արտաքին աշխարհի բախման խնդիրների պատկերումն է: Հերոսներին բնորոշ է խորացումը սեփական ներաշխարհում, ներքին մենախոսությունն ու ինքնամփոփումը (*ensimismamiento*), մյուս կողմից նկատվում է հերոսների կողմից անցյալի ոչնչացում սեփական գիտակցության մեջ: Կերպարային համակարգի միջոցով գրողը դրսևորել է իր գեղագիտական նպատակադրումը՝ սիրո միջոցով հաղթահարել իդեալների և աշխարհի միջև ընկած անանցանելի խոչընդոտը:

Գրքի նորույթը թուրքի դրական կերպարի կերտումն է: Իսպանացի գրողը փորձել է հանդես գալ թուրքի հոգեբանական ինքնաբացահայտումներով, ներաշխարհում կատարվող տեղաշարժերի պատկերմամբ, որի արդյունքում կարողացել է իր թուրք հերոսին օժտել մարդկային բնութագրով: Հեղինակը մասամբ փորձել է հասնել Կարլ Յունգի այն դիտարկմանը, համաձայն որի՝ խմբային անգիտակցականի արդյունքում է դրսևորվում համաթուրքական մոլագարությունը: Թուրքի կողմից սեփական մեղքի գիտակցման հարցը ստեղծագործության հանգույցն է, որով գրողը բոլոր տեսակի ոճիրների հեղինակներին հիշեցնում է ապաշխարանքի անհրաժեշտությունը:

---

<sup>9</sup> **Morte M.** El Cáucaso entre leyendas y Kaláshnikov, Barcelona, 2007, pág. 129:

Գրողը ցեղասպանությունը ներկայացնում է պատերազմի համատեքստում՝ նպատակ ունենալով պատկերել մարդու հոգեկան աշխարհի խաթարումը և պատերազմի ազդեցությունը մարդու հոգեբանության վրա:

Ստեղծագործության հերոսները ցեղասպանության կապակցությամբ ուղղակի իմաստով ավելի հաճախ են բախվում հայրենիքի վերագունման թեմային: Սրանք անհայրենիք հերոսներ են, որոնք պատմական իրադարձությունների բերումով հայտնվել են օտար երկրներում և շարունակ որոնում են իրենց հայրենի եզերքը: Այս դեպքում ևս Մորտեն անդրադառնում է համամարդկային հիմնախնդրի՝ սեփական արմատներին կառչելուն ու ինքնությունը չկորցնելուն, ինչն այդքան բնորոշ է առհասարակ 20-րդ դարի մարդուն, որը սեփական հայրենիքից դուրս շարունակ ազգային արմատների փնտրտուքի մեջ է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի ընդգրկումներն ու առանձնահատկությունները, քննության առնված խնդիրների շրջանակը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

✓ Իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեման պատկերվել է նորովի՝ չորս հեղինակների ութ վեպերով, հրապարակախոսական հոդվածներով ու չափածո ստեղծագործություններով: Իսպանացի գրողները ցեղասպանությունը քննում են 20-րդ դարին բնորոշ գոյաբանական՝ աշխարհի ու մարդու ամբողջականության քայքայման, մարդու գոյության կեցության այնպիսի որոնումների հայեցակերպով, որտեղ ցեղասպանությունը դիտարկվում է որպես համարդկային հիմնախնդիր:

✓ Ցեղասպանության թեման իսպանական գրականության մեջ արտահայտված է ինքնակենսագրական և ճամփորդական արձակի բոլոր ենթատեսակներով (օրագիր, ուղեգրություն, հուշագրություն, ժամանակագրություն):

Քննվող վեպերի մեծ մասը իր վրա կրում է պոստմոդեռնիզմի ազդեցությունը, բայց դրանք չի կարելի անվանել պոստմոդեռնիստական վեպեր, քանի որ դրանց մեջ առկա են նաև մոդեռնիստական վեպի տարրեր (Գուտիարան, Գուարչ), ինչպես նաև պահպանվել են ավանդական վեպին բնորոշ գծերը (Մորտե):

«Սինթետիկ» ոճը բնորոշ է ժամանակակից իսպանական գրականությանը, սակայն մեր ուսումնասիրության խնդրո առարկա հեղինակների դեպքում դա տուրք չէ ժամանակի հովերին, այլ անհրաժեշտ միջոց՝ ցեղասպանության պես բարդ խնդիրը գեղարվեստական ստեղծագործության օգնությամբ արդիակա-նացնելու:



✓ Խ. Ա. Գուռիարանը պատմում է ցեղասպանության հետևանքով առաջացած հայկական ահաբեկչական շարժման մասին: Հեղինակը վարպետորեն ներկայացնում է ցեղասպանությունը վերապրածների զավակների հոգեբանական բարդություններն ու ծայրահեղական հայացքները: Պատկերելով ցեղասպանության առաջ բերած հետևանքները՝ Գուռիարանը կարողանում է հասնել ընդհանրացման՝ կարևորելով ինչպես առանձին վերցրած մարդու կյանքը՝ որպես բացարձակ արժեք, այնպես էլ մի ամբողջ ժողովրդի ճակատագիրը:

Գուռիարանը հայոց ցեղասպանությանն անդրադառնալիս առավել ուշադրություն է դարձնում հատկապես ցեղասպանության առաջ բերած հոգեբանական հետևանքների և զոհ-դահիճ փոխհարաբերությունների պատկերմանը:

Իսպանացի գրողները խոսում են կրկնակի ցեղասպանության մասին. առաջինը՝ ֆիզիկականն է, երկրորդը՝ դրա մոռացությունը կամ ժխտումը: Սակայն, եթե մյուս հեղինակների մոտ մոռացումը ևս դատապարտելի է, բայց արտահայտված է գեղարվեստական ստեղծագործության ենթատեքստում, ապա Գուռիարանի մոտ այդ հարցը ներկայացված է առաջին պլանում և ընդգծված է՝ սկսած ստեղծագործության վերնագրից:

✓ Գ. Գուարչի վեպերում առաջնային տեղում փաստական հենքով ու գեղարվեստական լուծումներով պատումն է: Հատկանշական է, որ այս գրողը ձգտում է պատմական կոնկրետության, իրադարձությունների ու դեմքերի լայն, համապարփակ ներկայացման: Գուարչի գրական խնդիրներից մեկն է պարզել անհատի տեղն ու դերը հանրային-քաղաքական կոնկրետ պայմաններում: Այս դեպքում գրողը հանդես է գալիս պատմաբանի, սոցիոլոգի դերում, փորձում վերստեղծել տվյալ ժամանակահատվածի պատմական քրոնիկոնը, դիտարկել Օսմանյան կայսրությունը՝ որպես սոցիալական օրգանիզմ, ինչով և բացատրվում է կոմպոզիցիայի յուրատիպությունը՝ իրադարձությունների ժամանակագրական շղթայի մասնատումը ժամանակային փոքր հատվածների:

Գուարչն առաջիններից էր, որը կերտում է իսլամացած հայ կանանց կերպարներ, ավելին, անդրադառնում է բռնության ենթարկված կանանց ու բռնության հետևանքով ծնված երեխաների թեմային:

✓ Մ. Մորտեի վեպում նկատելի է Նիցշեի փիլիսոփայության հիմնադրույթների, կյանքի էքզիստենցիալիստական աշխարհընկալման դրսևորումը և տվյալ ստեղծագործության հերոսի բարդ ու կոնֆլիկտային ներաշխարհի պատկերումը: Մորտեի գեղագիտական որոնումների կենտրոնում մարդու և հասարակության փոխհարաբերությունների, անհատի ներքին և արտաքին աշխարհի բախման խնդիրներն են:

Հեղինակի վեպերում դրսևորվում է նրա գեղագիտական հիմնական նպատակադրումը՝ սիրո միջոցով հաղթահարել մարդկային վեժ իդեալների և ապականված աշխարհի միջև ընկած անանցանելի խոչընդոտը:

Մորտեն ցեղասպանությունը ներկայացնում է պատերազմի համատեքստում՝ նպատակ ունենալով պատկերել մարդու հոգեկան աշխարհի խաթարումը պատերազմի հետևանքով:

Մորտեի ստեղծագործություններն առանձնանում են իրենց գեղարվեստական բարձր արժեքով և ցեղասպանության՝ գեղարվեստական կերպավորման ու մեկնաբանման հարցում նոր մեկնակետերով ու մոտեցումներով:

✓ Չնայած թեմայի՝ տարբեր դիտանկյուններից ներկայացնելուն, մատուցման ձևի ու ոճի առանձնահատկություններին՝ իսպանացի գրողների ստեղծագործություններն ունեն որոշակի ընդհանրություններ. այդ հեղինակները կարևորում են ցեղասպանության պատմական հայեցակետը, ուստի կերպավորում են հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունները՝ կարողանալով հասնել երկու ժողովուրդների ճշմարիտ նկարագրի պատկերմանը:

Որպես ցեղասպանության դրդապատճառ՝ նրանք մատնանշում են երկու ազգերի հոգևոր, մշակութային ու արժեքային համակարգերի տարբերությունը: Իսպանացի գրողները թուրքերի հայատյացությունը և բռնությունը հաճախ պայմանավորում են մշակույթի (լայն առումով) բացակայությամբ:

Կերպարային համակարգի առումով նշված գրողները կարողացել են կերտել հայկական հոգեբանությամբ ու մտախառնվածքով հավաստի կերպարներ, քանի որ հերոսների նախատիպերը ցեղասպանությունը վերապրած կոնկրետ մարդիկ են կամ նրանց ժառանգները:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ**

1. Հայոց ցեղասպանության թեման իսպանական արձակում, «Գիտական աշխատություններ XVIII» (Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն), Գյումրի, 2015, էջ 170-177:
2. Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Մարիա Անխելա Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 1 (31 ), Եր., «Արման Ամանգույան» տպ., 2016, էջ 54-62:
3. Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Մարկ Մորտեի «Արարատի զավակները» վեպում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 2 (32), Եր., «Արման Ամանգույան» տպ., 2016, էջ 153-160:

4. The Specific Characteristics of Depictive Portraying of Armenian Genocide in Spanish Literature, «Բանբեր հայագիտության», N 2(11), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 150-157:
5. Խ. Ա. Գուդիարանի «Ռումբը» վեպի ինքնակենսագրական հիմքերը և փիլիսոփայական հիմնախնդիրը, Մ.Նալբանդյանի անվան ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», N 1, ՊՐԱԿ Բ,Գյումրի, 2017, էջ 48-55:
6. Հայոց ցեղասպանությունը որպես «հումանիզմի ճգնաժամի» դրսևորում Գոնսալո Գուարչի վեպերում, «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), N 1 (74), Եր., «Ասողիկ» հրատ., 2018, էջ 23-28:

## **КАРАПЕТЯН СИРАНУШ АНДРАНИКОВНА ТЕМА АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ИСПАНСКОЙ ЛИТЕРАТУРЕ**

### **РЕЗЮМЕ**

Геноцид армян является не только величайшей трагедией для всего человечества, но и особенной болью армянского народа. Прошло уже более ста лет, но проблема геноцида армян в человеческой истории не утратила свою актуальность. Тема геноцида армян находит свое отображение в документальных и художественных текстах, которые становятся негласными участниками этой истории и которые призывают к осуждению и предотвращению массового истребления людей вообще.

Данная диссертационная работа раскрывает художественный пласт армянской трагедии и, что самое интересное, показывает отношение и сопереживание другого народа. Следует отметить, что испанские писатели рассматривают геноцид армян не только как художественную экспрессию, но и воспроизведение исторической истины.

В данной диссертации подвергаются анализу такие темы, как тема человеческого одиночества, возникшего вследствие духовной пустоты жизни, тема образности армянского и турецкого народов, а также акцентируются мотивы совершения геноцида. Основной тематикой романов испанских писателей становится проблема человеческих взаимоотношений, где даже в контрастности пары жертва-палач просматривается внешняя гуманность. Следует также отметить, что испанские писатели изображают человека в условиях нравственного коллапса и, таким образом, ставят на одну человеческую ступень трагедию отдельно взятого народа.

Новизна данной работы заключается в том, что история геноцида армян впервые рассматривается и анализируется в таком аспекте.

Данная диссертационная работа состоит из введения, трех глав, заключения и библиографии.

**Первая глава** работы раскрывает мир романов испанского журналиста Хосе Антонио Гурриарана, где автобиографическая линия переплетается с публицистическим пафосом ("Бомба" (1982г.), "Армения. Забытый геноцид" (2008г.)). Основной темой романов Гурриарана становятся истории об армянском террористическом движении, возникшем в результате геноцида. Автор мастерски сочетает психологический нарратив оставшихся в живых после геноцида детей с реальностью, в которой они оказались. Гурриаран тем самым стремится показать не только индивидуальное отношение человека к проблеме геноцида, а судьбу целой нации.

**Во второй главе** производится анализ трилогии испанского архитектора и писателя Гонсало Эрнандеса Гуарча. В трилогии представлены такие романы как "Армянское древо" (2002г.), "Армянское завещание" (2002г.), и "Белая гора" (2009г.). Основной темой трилогии является тема геноцида, но интересен тот факт, что геноцид рассматривается не только как проблема, но как преступление против человечества вследствие общего нравственного падения человека в начале XX века. Романы Гуарча прежде всего построены на документальной основе. Документальность писателя раскрывается в стремлении широкой презентации событий и лиц. Художественный замысел Гуарча определяет место и роль личности в конкретных общественно-политических условиях.

**В третьей главе** анализируются романы каталонского фотографа и писателя Марка Морте "Дети Арарата", "Кавказ между легендой и Калашниковым" (2008г.) а также произведения Марии Ангельс Англады "Тетрадь Арама" (1999г.). В этой же главе рассматриваются стихотворения Аиды Акости и Сантоса Домингеса Рамоса. Марк Морте и Мария Англада используют феномен памяти и вплетают воспоминания жертв геноцида в тексты своих произведений. Интересно отметить, что персонажами повествования часто являются дети, что многократно увеличивает трагедию всей пережитой истории.

Таким образом, в испанской литературе тема армянского геноцида представлена в своеобразном ракурсе. Испанские писатели сочетают публицистику и художественный текст и являют миру картину армянского геноцида глазами людей, не переживших этот геноцид. Художественная интерпретация армянского геноцида рассматривается в онтологическом аспекте, где разрушается целостность человека и мира, и геноцид становится мотивацией деструктивных процессов. Испанским писателям удастся сделать проблему одной нации общечеловеческой проблемой.

**SIRANUSH ANDRANIK KARAPETYAN**  
**THE ARMENIAN GENOCIDE IN SPANISH LITERATURE**

**SUMMARY**

The Armenian Genocide is not only the greatest pain and tragedy of the Armenian people but also of the whole humanity. Despite the century distance, the Armenian Genocide issue has not lost its relevance, trying to get all the condemnation and prevention of any genocide.

In the thesis the development of the theme, the application of the artistic principles and standards, the outlook of the genocide review, the characteristic of the Armenian and Turkish people, the genocide reasons and the scope of the raised issues are presented. In the context of the first genocide of the 20th century the authors examine the theme of the human loneliness, nascent from the spiritual emptiness of life. The goal of the writers is to come up with the interpretation of the historical truth, and some of them have attempted to depict the genocide within the scope of the relationship between man and war. The main theme of the novels is the executer-victim relationship, the history of not losing the humanism even in the suffering and difficult situation. The issue of the novels is the human being with his problems, when it is further exacerbated in the conditions of the weakening of moral points. Thus, we can say that our work is the first attempt to study the theme of the Armenian Genocide in the Spanish literature.

The study consists of introduction, three chapters, conclusion and bibliography. The introduction also presents the study of the theme, the methodology of the thesis, the scientific novelty, the structure, the main aim and objectives.

**The first chapter** is dedicated to the famous Spanish journalist Jose Antonio Gurriaran's novels, written with the biographical base and journalistic pathos, 'The Bomb' (1982), " The Armenians: forgotten Genocide '(2008). G. Gurriaran tells about the Armenian terrorist movement that emerged as a result of genocide. The author skillfully presents the psychological complexes and extreme views of the children of the genocide survivors. Depicting the consequences of the genocide, Gurriaran is able to reach generalization, highlighting the life of a single person as an absolute value, as well as, the fate of a whole nation.

**The second chapter** examines the Catalanian architect and writer Gonzalo Hernández Guarch's trilogy dedicated to the Armenian Genocide: 'The Family Tree' (2002), " The Armenian Testament (2008) and The White Mountain, («The Oriental man») novels, published in 2009. In the trilogy the Armenian genocide is viewed not only as a universal problem of humanity but also as a manifestation of the decadence of general moral values typical to the beginning of the 20th century. G. Guarch's novels are primarily based on factual and artistic solutions. It is

noteworthy that Guarche strives for historic precision, for a broad, comprehensive presentation of events and faces. One of Guarche's literary problems is to find out the place and the role of personality in specific political and social conditions.

**In the third chapter** we have presented the analysis of such novels as «The Caucasus between legends and Kalashnikov», “The Sons of the Ararat” (2008), written by the Catalan photographer and writer Marc Morte and “Aram’s pocketbook” (1999) by Maria Angels Anglada. We have also introduced the analysis of the poems written by Aida Acosta and Santos Dominguez Ramos. Maria Anglada and Marc Morte create novels based on the memories of the survivors of the Genocide. Obviously, the authors greatly appreciate the role of memories in the characterization of heroes. For the author's narrative of the events, both writers choose the reference of the memory of this or that hero as a starting point. Presenting the topic of the Genocide through child's eyes, Anglada and Morte seem to observe all the events and faces with the magnifying glass, which dramatically increases the impact of the narrative.

In the Spanish literature the theme of the Armenian Genocide is featured from new perspectives. The theme is presented with eight novels of four authors, journalistic articles and poetical works. The Spanish writers examine the genocide in the aspect of the degradation of the integrity of the world and human being, the living searches of human existence, typical for the 20th century. Here the genocide is considered as a motive of the phenomena listed above, moreover, as a universal problem.

A handwritten signature in blue ink, appearing to be 'W. Guarche', located at the bottom right of the page.